

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ**  
**ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝**  
**ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Հորդանանի Հաշիմյան Թագավորության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),

ցանկանալով խթանել միջազգային ավիացիոն համակարգը, որը արդար և հավասար հնարավորություններ է առաջարկում իրենց համապատասխան ավիաընկերություններին հաղորդակցությունների շահագործման համար, և որը նրանց թույլ է տալիս մրցելու յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան,

ցանկանալով դյուրացնել միջազգային օդային տրանսպորտի ընդլայնման հնարավորությունները,

ցանկանալով միջազգային օդային տրանսպորտում ապահովել թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձրագույն մակարդակ և վերահաստատելով իրենց խորին մտահոգությունն օդանավերի անվտանգության դեմ ուղղված գործողությունների կամ սպառնալիքների առնչությամբ, որոնք վտանգում են անձանց կամ գույքի անվտանգությունը, և

լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի կողմեր, որը ստորագրման համար բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին,

համաձայնեցին հետևյալի մասին.

**ՀՈՐԿԱԾ 1**  
**ԱՌԱՐԿԱՆ**

Պայմանավորվող կողմերը, սույն Համաձայնագրին, իրենց պետությունների ազգային օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, համագործակցություն են իրականացնում օդային հաղորդակցության բնագավառում:

**ՀՈՐԿԱԾ 2**  
**ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

1) Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման նպատակով, եթե այլ բան չի պահանջվում.

a) «Կոնվենցիա» տերմինը նշանակում է՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիան, որը ստորագրման համար



բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին և ներառում է ցանկացած հավելված, որն ընդունվել է այդ Կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, Կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածների համաձայն՝ հավելվածներում ու Կոնվենցիայում կատարված ցանկացած փոփոխություն՝ այնքանով, որքանով այդ հավելվածներն ու փոփոխությունները ուժի մեջ են մտել կամ վավերացվել երկու Պայմանավորվող կողմերի կողմից,

b) «**ավիացիոն իշխանություններ**» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտե, Հորդանանի Հաշիմյան Թագավորության համար՝ քաղաքացիական ավիացիայի կանոնակարգող հանձնաժողով, կամ, երկու դեպքում էլ՝ ցանկացած այլ անձ կամ մարմին, որը պատշաճ կերպով լիազորված է կատարելու սույն Համաձայնագրին առնչվող՝ նշված իշխանությունների կողմից իրականացվող ցանկացած գործառույթ,

c) «**նշանակված ավիաընկերություն**» տերմինը նշանակում է՝ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող ավիաընկերություն, որին յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակել է սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման համար՝ համաձայն սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի,

d) «**տարածք**», «**միջազգային օդային հաղորդակցություն**» և «**ոչ առևտրային նպատակներով կանգառ**» տերմիններն ունեն Կոնվենցիայի 2-րդ և 96-րդ հոդվածներով դրանց վերագրված իմաստները,

e) «**Համաձայնագիր**» տերմինը նշանակում է՝ սույն Համաձայնագիրը, դրա Հավելվածները և դրանց ցանկացած փոփոխություն,

f) «**սահմանված երթուղիներ**» տերմինը նշանակում է՝ սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված կամ սահմանվելիք երթուղիներ,

g) «**համաձայնեցված հաղորդակցություններ**» տերմինը նշանակում է՝ սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցություններ, որոնք կարող են շահագործվել սույն Համաձայնագրի դրույթների համաձայն,

h) «**սակագին**» տերմինը նշանակում է՝ գներ, որոնք ենթակա են վճարման ուղևորների և բեռների փոխադրման համար, գնի կիրառման պայմաններ, ներառյալ գործակալության և այլ հարակից ծառայությունների գները և պայմանները՝ բացառությամբ փոստի փոխադրման վարձավճարների և պայմանների:

i) «**տարողություն**» տերմինը նշանակում է՝

(i) օդանավի առնչությամբ՝ նշված օդանավի նստատեղերի և/կամ բեռների առկայությունը ամբողջ երթուղում կամ երթուղու որևէ հատվածում,

(ii) համաձայնեցված հաղորդակցությունների առնչությամբ՝ նման հաղորդակցություններում շահագործվող օդանավի տարողունակություն՝ բազմապատկած նման օդանավով ամբողջ երթուղով կամ այդ երթուղու որևէ



հատվածով սահմանված ժամանակահատվածում իրականացվող թռիչքների հաճախականությամբ,

յ) «**բեռնվածություն**» տերմինը նշանակում է՝ ուղևորներ, ուղեբեռներ, բեռներ և փոստ,

կ) «**սպառողից գանձումներ**» նշանակում է՝ իրավասու մարմնի կողմից կամ այդ մարմնի կողմից թույլատրված գանձում ավիաընկերություններից օդանավակայանի սեփականության կամ սպասարկման միջոցների կամ աերոնավիգացիոն սարքավորումների տրամադրման դիմաց կամ օդանավերին, անձնակազմերին, ուղևորներին և բեռներին տրամադրվող ծառայությունների և սպասարկման միջոցների մատուցման դիմաց:

2) Սույն Համաձայնագրի Հավելվածը և նրա փոփոխությունները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

### ՀՈԴՎԱԾ 3 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին տրամադրում է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքները՝ Հավելվածում սահմանված երթուղիներով կանոնավոր միջազգային օդային հաղորդակցությունների հաստատման նպատակով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները սահմանված երթուղով համաձայնեցված հաղորդակցություն շահագործելիս օգտվում են հետևյալ իրավունքներից.

a) մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքի վրայով առանց վայրէջքի թռչելու իրավունք,

b) ոչ առևտրային նպատակներով նշված տարածքում վայրէջքներ կատարելու իրավունք,

c) նշված տարածքի՝ սույն Համաձայնագրի Հավելվածի երթուղիների ցանկում սահմանված կետերում վայրէջքներ կատարելու իրավունք՝ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ տարածքից միջազգային փոխադրման նպատակով ուղևորներ, ուղեբեռ, բեռ, փոստ առանձին կամ համակցված կերպով օդանավ վերցնելու կամ օդանավից իջեցնելու համար՝ սույն Համաձայնագրի Հավելվածի դրույթների համաձայն:

3. Պայմանավորվող կողմերի այն ավիաընկերությունները, որոնք նշանակված ավիաընկերություն չեն, պետք է օգտվեն վերը նշված «a» և «b» ենթակետերով սահմանված իրավունքներից:

4. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է դիտվի որպես Պայմանավորվող կողմերից մեկի նշանակված ավիաընկերություններին մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում կաբոտաժի իրավունքի տրամադրում:



5. Եթե զինված հակամարտությունների, բնական աղետների կամ քաղաքական ընդվզումների հետևանքով Պայմանավորվող որևէ կողմի նշանակված ավիաընկերությունն անկարող է իրականացնելու սահմանված երթուղով հաղորդակցություն, Պայմանավորվող մյուս կողմը պետք է ձեռնարկի առավելագույն ջանքեր՝ երթուղիների համապատասխան ժամանակավոր վերադասավորման միջոցով նման հաղորդակցությունների շարունակական շահագործումն ապահովելու համար:

#### ՀՈԴՎԱԾ 4

### ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելով, իրավունք ունի սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու նպատակով ցանկացած թվով ավիաընկերություններ նշանակելու և նախկինում նշանակված ավիաընկերությունը մեկ այլ ավիաընկերությամբ փոխարինելու:

2. Նման նշանակումը և նշանակված ավիաընկերության կողմից ըստ սահմանված ձևի և եղանակի հայտը ստանալուն պես մյուս Պայմանավորվող կողմը ընթացակարգային նվազագույն ժամկետներում տրամադրում է համապատասխան շահագործման լիազորությունները և թույլտվությունները՝ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթների համաձայն:

3. Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ցանկացած ավիաընկերությունից պահանջել ապացույցներ, որ նա ի վիճակի է կատարելու այն օրենքներով և կանոնակարգերով նախատեսված պայմանները, որոնք այդ իշխանությունների կողմից սովորաբար և հիմնավորված կերպով կիրառվում են միջազգային օդային հաղորդակցությունների շահագործման նկատմամբ՝ համաձայն Կոնվենցիայի դրույթների:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված շահագործման լիազորությունները տրամադրվում են այն պայմանով, որ.

4.1. Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված ավիաընկերության դեպքում՝

4.1.1. այն հիմնադրված լինի Հայաստանի Հանրապետության տարածքում և լիցենզավորված Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, և

4.1.2. այդ ավիաընկերության սեփականության վերահսկիչ փաթեթը պատկանի Հայաստանի Հանրապետությանը կամ նրա քաղաքացիներին և փաստացիորեն վերահսկվի նրանց կողմից:



4.1.3. ավիաընկերությանը նշանակած Պայմանավորվող կողմը համապատասխանի 8-րդ հոդվածում և 9-րդ հոդվածում սահմանված դրույթներին:

4.2. Հորդանանի Հաշիմյան Թագավորության կողմից նշանակված ավիաընկերության դեպքում՝

4.2.1. այն հիմնադրված լինի Հորդանանի Հաշիմյան Թագավորության տարածքում և լիցենզավորված Հորդանանի Հաշիմյան Թագավորության գործող օրենսդրությանը համապատասխան, և

4.2.2. այդ ավիաընկերության սեփականության իրավունքի էական մասը պատկանի Հորդանանի Հաշիմյան Թագավորությանը կամ նրա քաղաքացիներին և փաստացիորեն վերահսկվի նրանց կողմից:

4.2.3. ավիաընկերությանը նշանակած Պայմանավորվող կողմը համապատասխանի 8-րդ և 9-րդ հոդվածներում սահմանված դրույթներին:

5. Այն դեպքում, երբ ավիաընկերությունը նման կերպով է նշանակվել և լիազորվել, այն կարող է ցանկացած ժամանակ սկսել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումները՝ համաձայն սույն Համաձայնագրով սահմանված դրույթների:

## ՀՈԴՎԱԾ 5 ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի չեղյալ հայտարարելու մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը տրված շահագործման լիազորությունը կամ տեխնիկական թույլտվությունները կամ կասեցնելու սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքներից օգտվելը կամ սահմանելու այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ կհամարի այդ իրավունքներից օգտվելու համար.

a) 1. Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված ավիաընկերության դեպքում՝

i) եթե այն հիմնադրված չէ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ լիցենզավորված չէ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, կամ

ii) ավիաընկերության նկատմամբ սեփականության հիմնական իրավունքը չի պատկանում Հայաստանի Հանրապետությանը կամ նրա քաղաքացիներին, և փաստացի հսկողությունը չի իրականացվում նրանց կողմից:

2. Հորդանանի Հաշիմյան Թագավորության կողմից նշանակված ավիաընկերության դեպքում՝

i) եթե այն հիմնադրված չէ Հորդանանի Հաշիմյան Թագավորության տարածքում և լիցենզավորված չէ Հորդանանի Հաշիմյան Թագավորության գործող օրենսդրությանը համապատասխան, կամ

ii) ավիաընկերության նկատմամբ սեփականության հիմնական իրավունքը չի պատկանում Հորդանանի Հաշիմյան Թագավորությանը կամ նրա



քաղաքացիներին, և փաստացի հսկողությունը չի իրականացվում նրանց կողմից, կամ

b) եթե տվյալ ավիաընկերությունը չի համապատասխանում այդ իրավունքները տրամադրած Պայմանավորվող կողմի պետության օրենքներին և կանոնակարգերին, կամ

c) ցանկացած դեպքում, երբ ավիաընկերությունը չի կարողանում համաձայնեցված հաղորդակցությունները շահագործել ըստ սույն Համաձայնագրում նշված պայմանների,

d) այն դեպքում, երբ մյուս Պայմանավորվող կողմը չի պահպանում կամ կիրառում սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում և 9-րդ հոդվածում սահմանված թռիչքային և ավիացիոն անվտանգության չափանիշները:

2. Առանց սահմանափակելու 8-րդ և 9-րդ հոդվածների դրույթների կիրառումը և մինչև անհապաղ չեղյալ հայտարարելը, կասեցնելը կամ սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանները սահմանելը, անհրաժեշտ է օրենքների և կանոնակարգերի հետագա խախտումները կանխելու համար նման իրավունքը իրականացնել միայն մյուս Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցություններից հետո:

## ՀՈԴՎԱԾ 6

### ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. Որևէ Պայմանավորվող կողմի օրենքները և կարգավորումները, որոնք վերաբերում են միջազգային օդային հաղորդակցության մեջ ներգրավված օդանավերի՝ իր տարածք մուտք գործելուն, տարածքում գտնվելուն կամ տարածքից մեկնելուն կամ իր տարածքում գտնվելիս նման օդանավերի շահագործմանը և նավիգացիային, պետք է կիրառվեն Պայմանավորվող երկու կողմերի օդանավերի նկատմամբ և պետք է պահպանվեն Պայմանավորվող մյուս կողմի նշանակված ավիաընկերության կողմից՝ վերոնշյալ Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելիս, տարածքում գտնվելիս և տարածքից մեկնելիս:

2. Մի Պայմանավորվող կողմի՝ մուտքին, ձևակերպումներին, տարանցմանը, իմիգրացիոն, անձնագրային, մաքսային, արժույթային, սանիտարական պահանջներին և կարանտինին վերաբերող օրենքների և կարգավորումների կատարումը պետք է ապահովվի մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից կամ միջազգային օդային հաղորդակցություններ կատարող նրա օդանավերի, անձնակազմերի կողմից՝ ուղևորների, ուղեբեռի, բեռների և փոստի առնչությամբ՝ այդ Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելիս, մեկնելիս, այնտեղ գտնվելիս կամ տարանցիկ անցնելիս:

3. Պայմանավորվող կողմերից որևէ մեկը չպետք է առավելություն տա իր կամ այլ ավիաընկերության՝ համանման միջազգային օդային հաղորդակցություններում ընդգրկված Պայմանավորվող մյուս կողմի



ավիաընկերությունների նկատմամբ՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված կարգավորումների կիրառման տեսանկյունից կամ իր հսկողության տակ գտնվող օդանավակայանների, երթուղիների, օդային երթևեկության ծառայությունների և հարակից սարքավորումների/միջոցների օգտագործման տեսանկյունից:

## ՀՈԴՎԱԾ 7

### ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ

1. Թռիչքային պիտանիության վկայականները, որակավորման վկայականները և լիցենզիաները, որոնք տրվել կամ վավեր են ճանաչվել համաձայն մի Պայմանավորվող կողմի կանոնների և ընթացակարգերի և դեռևս ուժի մեջ են, պետք է վավեր ճանաչվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով՝ պայմանով, որ այն պահանջները, որոնց համաձայն տրվել կամ վավեր են ճանաչվել նման վկայականները և լիցենզիաները, հավասար են Կոնվենցիայով սահմանված նվազագույն չափանիշներին կամ գերազանցում են դրանք:

2. Այնուամենայնիվ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավունք է վերապահվում մերժելու մյուս Պայմանավորվող կողմի կողմից իր քաղաքացիներին տրված կամ վավեր ճանաչված համապատասխանության վկայականների ու լիցենզիաների վավեր ճանաչումը՝ իր պետության տարածքի վրայով թռիչքի և/կամ տարածքում վայրէջքի նպատակով:

## ՀՈԴՎԱԾ 8

### ԹՌԻԶՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է մյուս Պայմանավորվող կողմի կողմից ընդունված՝ օդանավի անձնակազմերին, օդանավերին կամ դրանց շահագործմանը վերաբերող ցանկացած ոլորտի թռիչքային չափանիշների շուրջ խորհրդակցությունների անցկացում խնդրել: Նման խորհրդակցությունները պետք է անցկացվեն այդ խնդրանքի օրվանից 30 օրվա ընթացքում:

2. Եթե այդպիսի խորհրդակցություններից հետո մի Պայմանավորվող կողմը գտնում է, որ մյուս Պայմանավորվող կողմը նման որևէ ոլորտում արդյունավետորեն չի հետևում և կիրառում թռիչքների անվտանգության չափանիշները, որոնք առնվազն հավասար են այդ պահի դրությամբ Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին, առաջին Պայմանավորվող կողմը պետք է տեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմին հայտնաբերված նման թերությունների և տվյալ նվազագույն չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերի մասին, իսկ մյուս Պայմանավորվող կողմը պետք է ձեռնարկի համապատասխան ուղղիչ գործողություն: Մյուս



Պայմանավորվող կողմի կողմից 15 օրվա ընթացքում կամ համաձայնեցված ավելի երկար ժամանակահատվածում համապատասխան գործողության չձեռնարկումը պետք է հիմք լինի սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի (Չեղյալ հայտարարումը) կիրառման համար:

3. Չնայած Կոնվենցիայի 33-րդ հոդվածում նշված պարտավորություններին՝ համաձայնեցված է, որ մի Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից դեպի մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ այդ տարածքից իրականացվող հաղորդակցություններում շահագործվող ցանկացած օդանավ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվելիս կարող է մյուս Պայմանավորվող կողմի լիազորված ներկայացուցիչների կողմից դառնալ օդանավում և օդանավի շրջակայքում իրականացվող զննության առարկա՝ ստուգելու օդանավի և նրա անձնակազմի փաստաթղթերի վավերությունը, օդանավի և նրա սարքավորումների փաստացի վիճակը (սույն հոդվածում կոչվում է «կառամատուցային տեսչական ստուգում»)՝ պայմանով, որ այդ գործողությունները չեն հանգեցնի անհարկի ուշացման:

4. Եթե այդպիսի կառամատուցային տեսչական ստուգումը կամ մի շարք կառամատուցային տեսչական ստուգումները առաջացնում են.

ա) լուրջ մտահոգություններ, որ օդանավը կամ օդանավի շահագործումը չի համապատասխանում այդ պահի դրությամբ Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին, կամ

բ) լուրջ մտահոգություններ, որ այդ պահի դրությամբ Կոնվենցիայի համաձայն սահմանված թռիչքների անվտանգության չափանիշների արդյունավետ պահպանումը և կառավարումը թերի են,

ստուգումն իրականացնող Պայմանավորվող կողմը պետք է, Կոնվենցիայի 33-րդ հոդվածի նպատակներով, ազատ լինի եզրակացնելու, որ այն պահանջները, որոնց համաձայն տրվել կամ վավեր են ճանաչվել այդ օդանավի կամ այդ օդանավի անձնակազմի վկայականները կամ լիցենզիաները, կամ այն պահանջները, որոնց համաձայն շահագործվում է օդանավը, հավասար չեն Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին կամ չեն գերազանցում դրանք:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների ներկայացուցչի կողմից մերժվել է վերոնշյալ 3-րդ կետի համաձայն շահագործվող օդանավի կառամատուցային տեսչական ստուգում իրականացնելու նպատակով մուտքը, մյուս Պայմանավորվող կողմը ազատ է ենթադրելու, որ առաջանում են 4-րդ կետում նշված լուրջ մտահոգությունները, և կատարելու այդ կետում նշված եզրակացությունները:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի՝ մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների շահագործման լիազորությունը անմիջապես կասեցնելու կամ փոփոխելու իրավունք է վերապահվում այն դեպքում, երբ առաջին Պայմանավորվող կողմը



կառամատուցային տեսչական ստուգման, կառամատուցային տեսչական ստուգումների շարքի, կառամատուցային տեսչական ստուգման մուտքի մերժման, խորհրդակցության կամ այլ կերպ եզրակացնում է, որ անհապաղ գործողությունն անհրաժեշտ է ավիաընկերության թռիչքային անվտանգության համար:

7. Վերոնշյալ 2-րդ և 6-րդ կետերի համաձայն իրականացվող՝ Պայմանավորվող կողմի ցանկացած գործողություն պետք է դադարեցվի, երբ այդ գործողության ձեռնարկման հիմքերը վերանան:

8. Պայմանավորվող որևէ կողմի նշանակված ավիաընկերությունները չպետք է ընդգրկված լինեն թռիչքային անվտանգության որևէ ճանաչված գործակալության կամ թռիչքային պիտանիության հարցերով զբաղվող մարմնի կողմից հրապարակված՝ արգելված ավիաընկերությունների որևէ ցուցակում:

## ՀՈԴՎԱԾ 9

### ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային իրավունքից բխող իրենց իրավունքներին ու պարտավորություններին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն անօրինական միջամտություններից պաշտպանելու՝ միմյանց նկատմամբ իրենց պարտավորությունը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Առանց միջազգային իրավունքի ներքո իրենց ստանձնած իրավունքների ու պարտավորությունների սահմանափակման՝ Պայմանավորվող կողմերը պետք է, մասնավորապես, գործեն համաձայն 1963 թվականի սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված՝ «Օդանավում կատարված հանցագործությունների և որոշ այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970 թվականի դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված՝ «Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված՝ «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի՝ «Միջազգային օդանավակայաններում բռնության անօրինական ձեռնարկումների դեմ պայքարելու մասին» 1988 թվականի փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված արձանագրության, որը լրացնում է 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված՝ «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիան, 1991 թվականի մարտի 1-ին Մոնրեալում ստորագրված՝ «Պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով նշագրման մասին» կոնվենցիան և նույն ոլորտի այլ միջազգային փաստաթղթերի, որոնց անդամ կարող են հանդիսանալ Պայմանավորվող կողմերը:

2. Պայմանավորվող կողմերը խնդրանքի դեպքում պետք է միմյանց տրամադրեն անհրաժեշտ աջակցություն՝ կանխելու համար օդանավերի ապօրինի գրավման գործողությունները և օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի,



օդանավակայանների և ատրոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք:

3. Պայմանավորվող կողմերը իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է գործեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության հաստատած և Կոնվենցիայի Հավելվածներ հանդիսացող՝ ավիացիոն անվտանգության դրույթներին համապատասխան՝ այնքանով, որքան ավիացիոն անվտանգության այդպիսի դրույթները կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ. նրանք պետք է պահանջեն, որ իրենց գրանցման օդանավ շահագործողները կամ օդանավ շահագործողները, որոնց գործունեության հիմնական վայրը կամ մշտապես գտնվելու վայրը Պայմանավորվող կողմերի տարածքում է, և իրենց տարածքում օդանավակայանային շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ նման օդանավ շահագործողներից կարող է պահանջվել պահպանել վերը նշված կետում հիշատակվող՝ մյուս Պայմանավորվող կողմից պահանջվող ավիացիոն անվտանգության դրույթների ապահովումը այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելու, մեկնելու կամ նրա տարածքում գտնվելու ընթացքում: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ապահովի, որ արդյունավետ պատշաճ միջոցներ կիրառվեն իր պետության տարածքում օդանավի պաշտպանության և ուղևորների, անձնակազմի, ձեռքի իրերի, ուղեբեռի, բեռի և օդանավի պաշարների զննման համար մինչև դրանց ընդունումն օդանավ: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նաև բարյացակամ դիտարկման արժանացնի կոնկրետ սպառնալիքի դիմակայմանն ուղղված՝ անվտանգության հիմնավորված հատուկ միջոցներ ձեռնարկելու մյուս Պայմանավորվող կողմի յուրաքանչյուր խնդրանք:

5. Երբ տեղի է ունենում միջադեպ կամ առկա է քաղաքացիական օդանավի ապօրինի գրավման միջադեպի սպառնալիք կամ այլ անօրինական գործողություն՝ ուղղված նման օդանավի, նրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների կամ ատրոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ, Պայմանավորվող կողմերը պետք է աջակցեն միմյանց՝ դյուրացնելով կապը, ու համապատասխան այլ միջոցներ ձեռնարկեն՝ ուղղված նման միջադեպի կամ դրա սպառնալիքի հնարավորինս արագ և անվտանգ վերացմանը:

6. Երբ Պայմանավորվող կողմը հիմնավոր հիմքեր ունի կարծելու, որ մյուս Պայմանավորվող կողմը շեղվել է սույն հոդվածի ավիացիոն անվտանգության դրույթներից, այդ Պայմանավորվող կողմը կարող է պահանջել անհապաղ խորհրդակցություններ մյուս Պայմանավորվող կողմի հետ:

7. Առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի (Չեղյալ հայտարարումը) սահմանափակման՝ նման խնդրանքի օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում բավարար համաձայնության չկայացումը հիմք է երկու Պայմանավորվող կողմերի ավիաընկերությունների շահագործողական լիազորության կամ տեխնիկական



թույլտվության մերժման, չեղարկման, սահմանափակման կամ դրանցում պայմանների սահմանման համար:

8. Չկանխատեսված և անմիջական սպառնալիքով պայմանավորված՝ Պայմանավորվող կողմը կարող է ձեռնարկել միջանկյալ գործողություն նախքան տասնհինգ (15) օրվա լրանալը:

9. Վերը նշված 7-րդ կետի համաձայն ձեռնարկված ցանկացած գործողություն դադարեցվում է մյուս Պայմանավորվող կողմի կողմից սույն հոդվածի դրույթներին համապատասխանությունն ապահովելու դեպքում:

10. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ բոլոր հնարավոր միջոցները պետք է ձեռնարկի, որպեսզի իր երկրի տարածք ժամանած՝ անօրինական գրավման կամ այլ անօրինական միջամտության առարկա դարձած օդանավը մնա այնտեղ մինչև նրա մեկնելը խիստ անհրաժեշտ լինի մարդկային կյանքի պաշտպանության համար: Հնարավորության դեպքում նման գործողությունները պետք է իրականացվեն երկկողմ խորհրդակցությունների հիման վրա:

#### **ՀՈԴՎԱԾ 10**

#### **ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԱՅԻՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ**

Յուրաքանչյուր օդանավակայանից, ներառյալ նրա համակարգերը, տեխնիկական և այլ հարմարություններից ու ծառայություններից օգտվելու դիմաց գանձվող վարձավճարները և այլ գանձումները, ինչպես նաև օդային երթևեկության սարքավորումների, հաղորդակցության միջոցների և ծառայությունների դիմաց բոլոր գանձումները, համաձայն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի, պետք է կատարվեն յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պետության տարածքում սահմանված դրույթներին և սակագներին համապատասխան՝ պայմանով, որ նշված գանձումները չպետք է գերազանցեն նշված օդանավակայանից և ծառայություններից օգտվելու համար նմանատիպ միջազգային հաղորդակցություններում ներգրավված իր ազգային օդանավից գանձվող վարձավճարները:

#### **ՀՈԴՎԱԾ 11**

#### **ԱԶԱՏՈՒՄՆԵՐ**

1. Որևէ Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների օդանավերը, որոնք շահագործվում են միջազգային օդային հաղորդակցություններում, ինչպես նաև դրանց հաշվեցուցակային սարքավորումները (սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են օդանավի շահագործման ժամանակ օգտագործելու համար), վառելիքի ու քսայուղերի պաշարները և նման օդանավերում գտնվող պաշարները (ներառյալ սննդամթերքը, ըմպելիքները և ծխախոտը) մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք ժամանելիս ազատվում են բոլոր մաքսատուրքերից և այլ վճարներից կամ



հարկերից՝ պայմանով, որ այդպիսի սարքավորումները և պաշարները մնալու են օդանավում մինչև դրանց վերարտահանվելը:

2. Նման վճարներից կամ հարկերից ազատումներ են նաև նախատեսվում, բացառությամբ մատուցված ծառայությունների դիմաց համապատասխան վճարների.

a) օդանավի պաշարները, որոնք օդանավ են վերցվել որևէ Պայմանավորվող կողմի պետության տարածքում՝ այդ Պայմանավորվող կողմի իշխանությունների կողմից հաստատված սահմանաչափերով և նախատեսված են միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող մյուս Պայմանավորվող կողմի օդանավում օգտագործման համար,

b) այն պահեստամասերը, որոնք բերվել են որևէ Պայմանավորվող կողմի պետության տարածք՝ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավի տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման համար,

c) վառելիքը և քսայուղերը, որոնք նախատեսված են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավի համար. նույնիսկ այն դեպքում, երբ այդ պաշարները պետք է օգտագործվեն թռիչքի այն հատվածում, որն անցնում է այն Պայմանավորվող կողմի պետության տարածքի վրայով, որտեղ դրանք վերցվել են օդանավ,

d) տպագրված ավիատոմսերը, ավիաբեռնագրերը, ցանկացած տպագրված նյութ, որն իր վրա կրում է ընկերության տարբերանշանները, համազգեստները և գովազդային նյութերը, որոնք սովորաբար անվճար բաշխվում են նշանակված ավիաընկերությունների կողմից:

3. Որևէ Պայմանավորվող կողմի օդանավի հաշվեցուցակային սարքավորումները, ինչպես նաև օդանավում գտնվող նյութերը և պաշարները կարող են մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում բեռնաթափվել միայն այդ տարածքի մաքսային իշխանությունների համաձայնությամբ: Նման դեպքում դրանք կարող են դրվել նշված իշխանությունների հսկողության ներքո այնքան ժամանակ, մինչև վերարտահանվեն կամ այլ կերպ իրացվեն՝ մաքսային կանոնակարգերին համապատասխան:

4. Սույն հոդվածով նախատեսված ազատումները պետք է նաև տրամադրվեն այն դեպքերում, երբ որևէ Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները պայմանավորվածություններ են ձեռք բերում այլ ավիաընկերությունների հետ՝ հաշվեցուցակային սարքավորումների և սույն հոդվածում նշված այլ պարագաների՝ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում փոխառելու կամ փոխանցելու նպատակով՝ պայմանով, որ մյուս ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին այդ Պայմանավորվող կողմը տրամադրում է նույն ազատումները:



5. Որևէ Պայմանավորվող կողմի պետության տարածքով անցնող տարանցիկ ուղևորները, ինչպես նաև նրանց ուղեբեռը ենթակա են գործող մաքսային կանոնակարգերով սահմանված հսկողությանը: Ուղիղ տարանցմամբ փոխադրվող ուղեբեռը և բեռը պետք է ազատվեն ներմուծման մաքսատուրքերից և նման այլ հարկերից:

6. Սույն հոդվածով նախատեսվող ազատումները պետք է տրամադրվեն մաքսային կանոնակարգերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

## **ՀՈԴՎԱԾ 12 ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Եթե Պայմանավորվող կողմերի միջև չի գործում ավիաընկերությունների հարկային համակարգը կարգավորող՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, փոխադարձության հիմունքով, մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերություններին պետք է ազատի բոլոր տեսակի օդային հաղորդակցությունների շահագործումից ստացված շահույթներից և հասույթներից գանձվող հարկերից և վճարներից՝ առանց սահմանափակելու յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի սահմանած օրենսդրական պարտավորությունների կատարումը:

## **ՀՈԴՎԱԾ 13 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

1. Պայմանավորվող կողմերը փոխադարձության հիմունքներով ավիաընկերություններին կթույլատրեն ազատ մրցակցել սույն Համաձայնագրով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս՝ պայմանով, որ երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների համար կապահովվեն հավասար և արդար հնարավորություններ իրենց համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս:

2. Համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների նկատմամբ ուղևորային, բեռնային և/կամ փոստի փոխադրման, տարողության, հաճախականությունների և/կամ օգտագործվող օդանավերի տիպերի հարցում սահմանափակումներ չեն կիրառվի: Երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունները ազատ կլինեն համաձայնեցված հաղորդակցություններում իրականացվող իրենց շահագործումների հաճախականությունները և տարողությունը սահմանելիս:

3. Ոչ մի Պայմանավորվող կողմ միակողմանիորեն չի սահմանափակի մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից օգտագործվող օդանավի տարողությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա



կպահանջվի մաքսային, տեխնիկական, շահագործողական և/կամ շրջակա միջավայրի պահպանության համընդհանուր պահանջներից ելնելով:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կթույլատրվի, առևտրային հիմունքներով և շուկայական պայմաններին համաձայն, սահմանելու իր սակագները՝ առանց գործող մրցակցային օրենքների խախտման:

5. Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունից չի պահանջվում սակագների առնչությամբ խորհրդակցել երթուղում կամ նրա մի հատվածում շահագործումներ իրականացնող մյուս ավիաընկերությունների հետ:

6. Որևէ Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները մշտադիտարկման նպատակով կարող են պահանջել, որ նշանակված ավիաընկերությունը ներկայացնի իր սակագները: Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները չպետք է առանց հիմնավոր պատճառաբանություն ներկայացնելու մերժեն նման կերպ ներկայացված սակագները:

7. Պայմանավորվող կողմերը չպետք է միակողմանիորեն մերժեն նշանակված ավիաընկերության սակագները կամ դադարեցնեն դրանց կիրառումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ավիացիոն իշխանությունները կգտնեն, որ նման սակագների կիրառումը հանդիսանում է կամ կհանդիսանա գործող մրցակցային օրենքների խախտում:

8. Եթե որևէ Պայմանավորվող կողմ գտնում է, որ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության սակագները խախտում են համապատասխան մրցակցային օրենքները, ապա ցանկացած Պայմանավորվող կողմ իրավասու է խորհրդակցություններ պահանջելու: Նման խորհրդակցությունները պետք է նշանակվեն խորհրդակցության մասին խնդրանքի ծանուցումն ստանալուց 30 օրվա ընթացքում: Պայմանավորվող կողմերը պետք է համագործակցեն՝ հարցին անհրաժեշտ լուծում տալու համար պահանջվող տեղեկատվությունը տրամադրելով:

#### ՀՈԴՎԱԾ 14

#### ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություններին փոխադարձության սկզբունքով իրավունք է վերապահվում մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում ունենալու իրենց գրասենյակները և ներկայացուցիչները, ինչպես նաև առևտրային, շահագործողական և տեխնիկական անձնակազմը, ինչը պահանջվում է համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր հայեցողությամբ կարող է պահել իր անձնակազմը կամ օգտվել այն կազմակերպության, ընկերության կամ ավիաընկերության ծառայություններից, որը գործում է մյուս Պայմանավորվող



կողմի պետության տարածքում և ունի այդ պետության տարածքում նման ծառայությունների մատուցման իրավունք:

3. Ներկայացուցիչները և անձնակազմը ենթակա են մյուս Պայմանավորվող կողմի պետության գործող օրենքներին և կանոնակարգերին, և, համաձայն այդ օրենքների և կանոնակարգերի, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, փոխադարձության հիման վրա և առանց հապաղման, սույն հոդված 1-ին կետում նշված ներկայացուցիչներին և անձնակազմին կտրամադրի կացության և աշխատանքի թույլտվություններ, անհրաժեշտության դեպքում՝ արտոնագրեր կամ այլ համանման փաստաթղթեր:

4. Եթե, հատուկ հանգամանքներով պայմանավորված, անհրաժեշտ լինի անձնակազմի անհետաձգելի և ժամանակավոր մուտքը կամ կացությունը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պետության օրենքներով և կանոնակարգերով պահանջվող արտոնագրերը և այլ փաստաթղթերը կտրամադրվեն առանց հապաղման՝ նման անձնակազմի համապատասխան երկրի մուտքը չուշացնելու նպատակով:

5. Յուրաքանչյուր նշանակված ավիաընկերություն պետք է իրավունք ունենա մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում ինքնուրույն իրականացնելու վերգետնյա սպասարկման աշխատանքներ կամ, իր հայեցողությամբ, ամբողջովին կամ մասնակիորեն օգտվելու նման ծառայությունների մատուցման իրավունք ունեցող մատակարարների ծառայություններից: Եթե մի Պայմանավորվող կողմի պետության տարածքի վերգետնյա սպասարկման վերաբերյալ կանոնակարգումները բացառում կամ սահմանափակում են պայմանագրային հիմունքներով նման ծառայություններից օգտվելը կամ ինքնասպասարկումը, ապա յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության միատեսակ հնարավորություններ կտրվի ինքնասպասարկման և մատակարարի կամ մատակարարների կողմից մատուցվող վերգետնյա սպասարկման ծառայություններից օգտվելու հարցում:

6. Առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով և բացառելով միջազգային հաղորդակցություններ իրականացնող մեկ այլ ավիաընկերության հանդեպ խտրական վերաբերմունքը, Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերություններն ազատ են ինքնուրույն կամ գործակալի միջոցով ցանկացած արտարժույթով իրականացնելու օդային փոխադրումների վաճառք երկու Պայմանավորվող կողմերի տարածքում՝ համաձայն յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պետության գործող օրենքների:

7. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ավիաընկերությունները կարող են վաճառքի տարածքից իրենց տարածք փոխանցել վաճառքի տարածքում ծախսերի նկատմամբ հասույթների ավելցուկը: Նման զուտ փոխանցումներն ընդգրկում են ինքնուրույն կամ գործակալի միջոցով օդային փոխադրումների ծառայությունների և հարակից կամ լրացուցիչ ծառայությունների վաճառքից գոյացած հասույթները և այդպիսի հասույթներից մինչ դրանց փոխանցումը գոյացած տոկոսագումարները:



8. Նման փոխանցումները պետք է կատարվեն առանց որևէ Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող ֆինանսական պարտավորությունների սահմանափակման:

9. Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերություններին համապատասխան թույլտվություն կտրամադրվի՝ իրականացնելու համար նման փոխանցումները պատշաճ ժամանակին, ազատ փոխարկելի արժույթով՝ հարցման օրվա դրությամբ գործող պաշտոնական փոխարժեքով:

#### **ՀՈՂՎԱԾ 15 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին, վերջիններիս խնդրանքով, տրամադրում են համաձայնեցված հաղորդակցություններում առաջին Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից դեպի մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ այդ տարածքից փոխադրումների վերաբերյալ տեղեկություն և վիճակագրական տվյալներ՝ այն կարգով, որով այդ նշանակված ավիաընկերությունները պատրաստել և ներկայացրել են իրենց ազգային ավիացիոն իշխանություններին: Փոխադրումներին առնչվող ցանկացած լրացուցիչ վիճակագրական տվյալ, որը Պայմանավորվող կողմերից մեկի ավիացիոն իշխանությունները կարող են խնդրել մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններից, Պայմանավորվող կողմերից մեկի խնդրանքի համաձայն, ենթակա է Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև քննարկման և համաձայնեցման:

#### **ՀՈՂՎԱԾ 16 ԶՎԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ**

Որևէ Պայմանավորվող կողմ չպետք է հաստատման նպատակով մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերություններից պահանջի չվացուցակների, չվերթերի իրականացման ծրագրերի կամ չվերթերի շահագործման պլանների ներկայացում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կպահանջվի ոչ խտրական հիմքերով միատեսակ պայմաններ պարտադրելու համար, ինչպես նախատեսված է սույն հոդվածում, կամ երբ դա հստակորեն թույլատրվում է սույն Համաձայնագրով: Եթե Պայմանավորվող կողմը պահանջում է վերոնշյալ փաստաթղթերի ներկայացումը տեղեկատվական նպատակներով, ապա նա պետք է մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերությունների համար նվազագույնի հասցնի դրանց ներկայացման վարչական պահանջները և ընթացակարգերը:



## **ՀՈԴՎԱԾ 17** **ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սերտ համագործակցության ոգով՝ Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները ժամանակ առ ժամանակ պետք է խորհրդակցեն՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխանությունը և դրանց կիրառումը ապահովելու նպատակով:

## **ՀՈԴՎԱԾ 18** **ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճի առաջացման դեպքում Պայմանավորվող կողմերը պետք է ձգտեն առաջին հերթին այն լուծել ուղիղ բանակցությունների միջոցով:

2. Եթե Պայմանավորվող կողմերը չեն կարողանում վեճը լուծել բանակցությունների միջոցով, Պայմանավորվող որևէ կողմի առաջարկով՝ որոշում կայացնելու համար այն կարող է ներկայացվել երեք արբիտրներից բաղկացած տրիբունալ, որոնցից մեկական արբիտր նշանակում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իսկ երրորդը նշանակվում է նման ձևով նշանակված երկու արբիտրների կողմից: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ արբիտրին նշանակում է վաթսուն (60) օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը դիվանագիտական ուղիներով մյուսի կողմից ծանուցում է ստանում վեճը այդպիսի տրիբունալում լուծելու խնդրանքով: Երրորդ արբիտրը նշանակվում է երկրորդ արբիտրի նշանակմանը հաջորդող վաթսուն (60) օրվա ընթացքում: Երրորդ արբիտրը պետք է լինի այլ պետության քաղաքացի, պետք է գործի որպես միջնորդ դատարանի նախագահ և որոշի դատավարության անցկացման վայրը: Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը չի կարողանում նշանակել արբիտր սահմանված ժամկետում, ապա Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության խորհրդի նախագահը, Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով, պետք է նշանակի արբիտր կամ արբիտրներ, ինչպես պահանջվի: Բոլոր դեպքերում երրորդ արբիտրը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի և պետք է գործի որպես միջնորդ դատարանի նախագահ:

3. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել սույն հոդվածի 2-րդ կետում սահմանված՝ միջնորդ դատարանի նախագահի ցանկացած որոշում:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կվճարի իր արբիտրի հետ կապված ծախսերը և նրա վարձավճարը. երրորդ արբիտրի վճարը և նրա համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև դատավարության հետ կապված ծախսերը պետք է հավասարապես բաշխվեն Պայմանավորվող կողմերի միջև:



5. Այն դեպքում, երբ որևէ Պայմանավորվող կողմը կամ նրա կողմից նշանակված ավիաընկերությունը չի կատարում սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն կայացված որոշումները, մյուս Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել ցանկացած իրավունք կամ արտոնություն, որը նա շնորհել է սույն Համաձայնագրի ուժով:

### **ՀՈԴՎԱԾ 19 ԳՐԱՆՑՈՒՄԸ ԻԿԱՕ-ՈՒՄ**

Սույն Համաձայնագիրը, ներառյալ դրա ցանկացած փոփոխությունը, պետք է գրանցվեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում Հորդանանի Հաշիմյան Թագավորության Կառավարության կողմից:

### **ՀՈԴՎԱԾ 20 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Եթե որևէ Պայմանավորվող կողմ ցանկանում է փոփոխել սույն Համաձայնագրի դրույթներից որևէ մեկը, նա կարող է խորհրդակցություն խնդրել մյուս Պայմանավորվող կողմի հետ: Նման խորհրդակցությունը կարող է անցկացվել ավիացիոն իշխանությունների միջև և կազմակերպվել քննարկման կամ գրագրության միջոցով և պետք է սկսվի խնդրանքի ներկայացման օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում: Այդ կերպով համաձայնեցված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում 23-րդ հոդվածի համաձայն:

2. Սույն Համաձայնագրի Հավելվածի փոփոխությունները կարող են կատարվել Պայմանավորվող կողմերի իրավասու ավիացիոն իշխանությունների միջև ուղղակի համաձայնությամբ և հաստատվել դիվանագիտական հայտագրերի փոխանակմամբ: Այս բնույթի խորհրդակցությունները կարող են անցկացվել քննարկման կամ գրագրության միջոցով և պետք է սկսվեն խնդրանքի օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում:

### **ՀՈԴՎԱԾ 21 ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

Եթե երկու Պայմանավորվող կողմերի առնչությամբ ուժի մեջ մտնի ավիացիայի ոլորտի ընդհանուր բազմակողմ կոնվենցիա, ապա նման կոնվենցիայի դրույթները կունենան գերակա բնույթ:



**ՀՈԴՎԱԾ 22  
ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ գրավոր ծանուցել մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր որոշման մասին: Նման ծանուցումը միաժամանակ պետք է ուղարկվի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը: Նման դեպքում սույն Համաձայնագիրը դադարեցվում է ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու օրվանից տասներկու (12) ամիս անց, եթե մինչև այդ ժամանակահատվածի լրանալը ծանուցումը փոխհամաձայնությամբ հետ չի վերցվում: Մյուս Պայմանավորվող կողմից ծանուցման ստացման փաստի հավաստման բացակայության դեպքում ծանուցումը ստացված է համարվում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանալու օրվանից տասնչորս (14) օր հետո:

**ՀՈԴՎԱԾ 23  
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հայտագրերից վերջինի ստացման օրվանից, որով Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներպետական իրավական ընթացակարգերի կատարման մասին:


Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրել են սույն Համաձայնագիրը:

Կատարված է Ամման քաղաքում 2018 թվականի *հունիսի 1-ին* -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության  
Կառավարության կողմից՝**



**Հորդանանի Հաշիմյան  
Թագավորության Կառավարության  
կողմից՝**





**ՀԱՎԵԼՎԱԾ  
ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՑԱՆԿ**

A. Հայաստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունների կողմից նշանակված ավիաընկերություններին իրավունք է տրվում շահագործելու երկու ուղղություններով օդային հաղորդակցություններ հետևյալ սահմանված երթուղիներով.

Կետեր Հայաստանում	Միջանկյալ կետեր	Կետեր Հորդանանում	Կետեր տարածքից դուրս
ցանկացած կետ	ցանկացած կետ	ցանկացած կետ	ցանկացած կետ

B. Հորդանանի Հաշիմյան Թագավորության ավիացիոն իշխանությունների կողմից նշանակված ավիաընկերություններին իրավունք է տրվում շահագործելու երկու ուղղություններով կանոնավոր միջազգային օդային հաղորդակցություններ հետևյալ սահմանված երթուղիներով.

Կետեր Հորդանանում	Միջանկյալ կետեր	Կետեր Հայաստանում	Կետեր տարածքից դուրս
ցանկացած կետ	ցանկացած կետ	ցանկացած կետ	ցանկացած կետ

**Նշումներ**

1. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները կարող են մեկ կամ բոլոր թռիչքների ընթացքում բաց թողնել կամ փոփոխել սահմանված երթուղու մեկ կամ մի քանի կետեր՝ պայմանով, որ երթուղու մեկնման կամ ժամանման կետը գտնվի տվյալ Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները կարող են կիրառել Օդային փոխադրումների «ազատության» հինգերորդ իրավունքը, ինչը ենթակա է երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների համաձայնությանը:



3. Սահմանված երթուղիներով օդային հաղորդակցություններ շահագործելիս մի Պայմանավորվող կողմի նշանակված ցանկացած ավիաընկերություն կարող է կողերի համատեղ օգտագործման համաձայնություն կայացնել՝

a) նույն Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների հետ,

b) մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների հետ,

c) որևէ երրորդ կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների հետ:

Եթե նման երրորդ կողմը չի թույլատրում կամ հաստատում մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերությունների և այլ ավիաընկերությունների միջև համանման համաձայնությունների կայացումը դեպի այդ երրորդ երկիր, այդ երկրից կամ այդ երկրի միջով իրականացվող հաղորդակցությունների նկատմամբ, այդ Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններն իրավունք են ունենում չընդունելու նման համաձայնությունները:

4. Կողերի համատեղ օգտագործման համաձայնություններում երրորդ կողմի ներգրավվածությանը վերաբերող վերոնշյալ դրույթները, այնուամենայնիվ, կկիրառվեն՝ պայմանով, եթե նման համաձայնություններին մասնակցող բոլոր ավիաընկերությունները՝

a) ստացել են Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատումը և համապատասխանում են նման համաձայնությունների նկատմամբ նրանց կողմից կիրառվող պահանջներին,

b) ունեն օդային փոխադրումների պահանջվող իրավունքները և համապատասխանում են սույն Համաձայնագրի պահանջներին,

c) ուղևորներին տրամադրում են անհրաժեշտ տեղեկություն կողերի համատեղ օգտագործման նման համաձայնությունների մասին,

d) համապատասխանում են նման համաձայնությունների նկատմամբ Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների կողմից սովորաբար կիրառվող թռիչքային անվտանգությանը վերաբերող և այլ պահանջներին:



**AIR SERVICES AGREEMENT**

**BETWEEN**

**THE GOVERNMENT OF  
THE REPUBLIC OF ARMENIA**

**AND**

**THE GOVERNMENT OF  
THE HASHEMITE KINGDOM OF JORDAN**



**AIR SERVICES AGREEMENT  
BETWEEN  
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA  
AND  
THE GOVERNMENT OF THE HASHEMITE KINGDOM OF JORDAN**

The Government of the Republic of Armenia and the Government of the Hashemite Kingdom of Jordan (hereinafter referred to as the Contracting Parties);

Desiring to promote an international aviation system which offers fair and equal opportunities to their respective airlines for the operation of the services and which allows them to compete in accordance with the laws and regulations of each Contracting Party;

Desiring to facilitate the expansion of international air transport opportunities;

Desiring to ensure the highest degree of safety and security in international air transport and reaffirming their grave concern about acts or threats against the security of aircraft, which jeopardize the safety of persons or property; and

Being Parties to the Convention on International Civil Aviation opened for signature at Chicago on the seventh day of December 1944;

Have agreed as follows:

**ARTICLE 1  
SUBJECT**

